



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 96528 26.05 201 ԺԲ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից լրացուցիչ ծառայությունների և փաստաթղթերի տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Երևանի պետական համալսարանի կողմից տրամադրվող ներքոհիշյալ ծառայությունների և փաստաթղթերի համար սահմանել հետևյալ վճարաչափերը.

ա. ԵՊՀ-ում ուսումնառության (ինգամյա կրթություն, բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում - 1000 ՀՀ դրամ,

բ. ԵՊՀ-ում աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (ներառյալ՝ ժամավճարային հիմունքներով և համատեղությամբ կատարված աշխատանքի) - 1000 ՀՀ դրամ,

գ. դիպլոմի կրկնօրինակի տրամադրում - 10000 ՀՀ դրամ,

դ. դիպլոմի հավելվածի կրկնօրինակի տրամադրում - 5000 ՀՀ դրամ,

ե. ակադեմիական տեղեկանքի տրամադրում - 5000 ՀՀ դրամ,

զ. ուսանողական տոմսի կրկնօրինակի տրամադրում - 5000 ՀՀ դրամ,

է. ստուգման գրքույկի կրկնօրինակի տրամադրում - 5000 ՀՀ դրամ,

ը. հատուկ ծրագրով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների պահեստային միջին բուժաշխատողի որակավորման վկայականի տրամադրում - 5000 ՀՀ դրամ,

թ. արտասահմանյան կազմակերպությունների հարցմամբ ԵՊՀ կողմից տրված դիպլոմի և դիպլոմի հավելվածի իսկության հաստատում - 100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

ժ. ԵՊՀ-ի կողմից տրամադրվող փաստաթղթերի թարգմանություն - 5000 ՀՀ դրամ,

ժա. թարգմանված փաստաթղթերի հաստատում (յուրաքանչյուր էջի արժեքը) - 1000 ՀՀ դրամ,

ժբ. նոր ձևանմուշի դիպլոմի հավելվածի (15 թերթ) հաստատում - 2000 ՀՀ դրամ,

ժգ. ապոստիլ դնելու համար անհրաժեշտ ԵՊՀ փաստաթղթերի նախապատրաստում - 2000 դրամ:

2. Սույն հրամանի 1-ին կետի «ա»-ից «ը» ենթակետերով նախատեսված փաստաթղթերի տրամադրման համար սահմանված վճարներ կատարելու պահանջը չի տարածվում ԵՊՀ աշխատողների վրա:

3. Սույն հրամանի 1-ին կետի «ա» և «ե» ենթակետերով նախատեսված փաստաթղթերի տրամադրման համար սահմանված վճարներ կատարելու պահանջը չի տարածվում ԵՊՀ-ում տվյալ պահին սովորող ուսանողների վրա:

4. ԵՊՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերում ԵՊՀ աշխատողների մեղքով թույլ տրված վրիպակներն ուղղելու և նոր փաստաթուղթ տրամադրելու համար սույն հրամանում սահմանված վճարները չեն գանձվում:


5. Սույն հրամանի ընդունման պահից ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ռեկտորի 18.07.2006թ. թիվ 158Տ2 և 23.11.2006թ. թիվ 248Տ13 հրամանները:

6. Սույն հրամանի նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին (Ա. Գրիգորյան) և ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին (Գ. Գևորգյան):

7. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությանը, միջազգային համագործակցության վարչությանը, հաշվապահությանը, արխիվին և ֆակուլտետներին:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ



Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ